

պարհին՝ Հիմնավոր աշխատությանը նրանք մը-
շակել են այն գլխավոր սկզբունքները, որոնք
անհրաժեշտ են այդ աղբյուրների վերծանու-
թյան, մեկնարանման և արժեքավորման համար:
Այդ խմբագրված աշխատությունները «Տնտեսական
պատմության վավերագրեր» մատենաշարի ստեղ-
ծումը և այդ մատենաշարի առաջին գրքի՝
«Հովհաննես Տեր-Գալստյան Զուգայեցու հաշվե-
տումարի» հրատարակումը մի ամբողջ երևույթ
է մեր ժողովրդի անցյալի պատմության աղբյու-
րագիտական լիարժեք բաղա ստեղծելու գոր-
ծում: «Հաշվետումարին» նախորդող առաջա-
բանը, իր հերթին, մի կարևոր ուսումնասիրու-
թյուն է՝ կատարված հիմնավոր և գիտական
խոր պարտաճանաչությամբ:

Կուզենք ավելացնել նաև, որ Լ. Ս. Խաչիկ-
յանի և Հ. Գ. Փափազյանի աշխատասիրությամբ
ույս աշխարհ էկած այս գործը, ամբողջությամբ

վերցրած, մեծ կարևորություն ունի նաև այն ա-
ռամտի, որ ըմբռնման բանալի է ապիս բաղ-
մաթիվ հրապարակված կամ անտիպ վավերագ-
րերի, որոնք տնտեսական բնույթ չկրելով հան-
դերձ, էրբեմն նաև տնտեսական բնույթի տեղե-
կություններ են պարունակում: Կատարված է
խսկապես մի արժեքավոր և մեծապես զնահա-
տելի գործ, որը մեր աղբյուրագիտական բնույ-
թի հրապարակումների մեջ ունի ուրույն տեղ և
ուրույն արժեք:

Ցավով է, սակայն, որ հրատարակությունը
չունի ամփոփում ուղեղն և մի որևէ օտար
լեզվով, որն ավելի կբարձրացներ նրա գիտա-
կան արժեքը և իր վրա կհրավիրեր ավելի լայն
գիտական հասարակայնության ուշադրությունը:

Պատմ. գիտ. դոկտոր Վ. Ա. ԴԻՍՅԱՆ

J. J. S. WFITENBERG, *Armenian dialects and the Latin-Armenian
glossary of Autun. Տպագրված Medieval Armenian Culture* (University
of Pennsylvania Armenian Texts and Studies 6). Chico, CA: Scholars
Press, էջ 13-28:

Ֆրանսիացի գիտնական Հ. Օմոնը 1882 թ.
հրապարակել էր Հատին-Հայերեն մի համառոտ
բառացանիկ, որը պարունակում էր 90 բառային
միավոր: Նա այդ բառացանիկը հայտնաբերել էր
Ֆրանսիայի Օտունի գրադարանում՝ մի լատի-
ներեն ձեռագիր ժողովածուի վերջին երկու էջի
վրա: Այդ հրապարակումից վեց տարի անց
Ա. Կարիերը կարգում էր բառացանկի հայերեն
բառերը և այն հրատարակում արժեքավոր ծա-
նոթագրություններով:

Այն այդ սկզբնաղբյուրի բարբառագիտական
բնույթն էլ նվիրված է այդ նախնի համալսարանի
պրոֆեսոր Ջ. Վալտենբերգի ուսումնասիրու-
թյունը, որի մեջ բերվող լեզվական փաստերը
և դրանց հիման վրա արվող եղրակացություն-
ները որոշակի հետաքրքրություն են ներկայաց-
նում հայերենագիտության համար:

Վալտենբերգը իր բնութագրերը կատարում է ոչ
միայն Օմոնի և Կարիերի հրապարակումների,
այլև Օտունի գրադարանից ստացած հիշյալ
բառացանկի լուսանկարների՝ ուսումնասիրու-
թյամբ՝ հստակ բերելով հայերենի բարբառների
նյութի լավատեղյակություն:

1 Բառացանկի այդ երկու էջի լուսանկարները
հրապարակված են քննարկվող հոդվածում, բայց
արտատպություն այնքան անորակ է, որ հնա-
րավոր չէ վերծանել բոլոր բառերը:

Նախքան բուն լեզվական նյութի բնութագրեր
անցնելը՝ վալտենբերգը ձեռագրի վերաբերյալ
կարևոր է համարում անել հետևյալ դիտողու-
թյունները.

1) Հայերեն բառերը բառացանկում գրված
են լատիններեն տառերով: Դատելով տառատե-
սակների բնույթից՝ Օմոնը ձեռագիրը հատկաց-
րել է IX դարի վերջին կամ X դարի սկզբներին:

2) Այս առումով, եթե նկատի չունենանք վի-
ճական արձանագրությունները, բառացանկը և
Մաշտոցի անվան Մատենադարանի 887 թ. գրը-
չագրի ավետարանը հայերենի ամենահին գրա-
վոր աղբյուրներն են, թեև հնարավոր է նաև,
որ բառացանկը լինի ավելի հին: Վալտենբերգը
բերում է մի քանի փաստեր, որոնք ենթադրել
են տալիս, որ հիշյալ ձեռագիրը պիտի որ ըն-
դօրինակություն լինի: Ձեռագրում, օրինակ, նը-
կատելի են բառերի դրության հաջորդականու-
թյան խախտումներ, նույն բառում տառերի
գրության շփոթություն, բառաչնջումներ և այլն,
որոնք կարող էին լինել միայն բնագրի արտա-
դրության ժամանակ:

Բառացանկի հայերենագիտական արժեքը մե-
ծանում է հատկապես նրանով, որ այն, գրված
լատիններեն տառերով, հայերեն չիմա-
ցող մի անձնավորության կողմից (ենթադրվում
է լատին հոգևորական), իր վրա չի կրում դա-
սական հայերենի ուղղագրության կնիքը, մի

բան, որ այնքան ուժեղ զգացվում է հայատառ աղբյուրներում:

Բառացանկի լեզվաբանական քննությունն իր նպատակից դուրս համարելով, Վայտենբերգը իր առջև խնդիր է դնում պարզելու բառացանկի հիմքում ընկած հայերենի բարբառային առանձնահատկությունները և այդ հիմքի վրա նաև այդ բարբառի աշխարհագրական տեղագրությունը: Այդ հարցը, անշուշտ, կարելի էր պարզել հայազգի այն անձնավորության ինքնության որոշումամբ, որը բառացանկի համար ծառայել է որպես տեղեկատու անձ: Սակայն, ցավոք, այդ անձնավորության մասին ոչինչ հայտնի չէ, բացի այն, որ նա IX—X դդ. սահմանագծում (կամ ավելի վաղ) եղել է Եվրոպայում: Հետևաբար, առաջադիր խնդրի լուծման միակ աղբյուրը մերում է բառացանկի լեզուն:

Բառացանկի լեզվի բարբառային պատկանելիությունը որոշելու համար Վայտենբերգը ուշադրություն է դարձնում հետևյալ փաստերի վրա.

1. Բառացանկում արձանագրվում են միջնալանկի անշեշտ ե և ո ձայնավորների անկմամբ բառեր, ինչպես՝ *erchun* = երեսուն, *atmunc* = աստամունք: Նման փոփոխություն սպասելի էր նաև ֆառասուն բառում, որովհետև այն բարբառները, որոնք երեսուն բառի դիմաց ունեն լոսուն, նույնը ունեն նաև ֆառասուն > ֆառուն բառում: Բայց բառացանկում անսպասելիորեն ունենք *karraschun*՝ միջնալանկի անշեշտ ա-ի պահպանմամբ: Հոգվածագիրը սա բացատրում է որպես գրական լեզվի ազդեցություն:

Հայտնի է, որ երեսուն և ֆառասուն (և նման) բառերում միջնալանկի ձայնավորները պահպանվում են այն բարբառներում, որոնք շեշտը վերջին վանկից տեղափոխել են վերջընթեր վանկ: Քանի որ նման շեշտադրությունը և նըշված ձայնավորների շեշտի տակ անփոփոխ մընալը հատուկ է Ազուլիս-Ղարաբաղ-Երևան տարածքի բարբառներին, Վայտենբերգը սրանից եզրակացնում է, որ բառացանկի լեզուն չի կարող պատկանել այդ տարածքին: Սա առաջին ընդհանուր դիտողությունն է, որ բացասման մեթոդով արվում է բառացանկի լեզվի բարբառային պատկանելության վերաբերյալ:

2. Երկրորդ դիտողությունը վերաբերում է դասական հայերենի ե և ո ձայնավորների երկբարբառացմանը: Հայտնի է, որ հայերենի ե և ո ձայնավորները անշեշտ դիրքում չեն երկբարբառանում (այդ դիրքում երկբարբառացումը հետագայի երևույթ է՝ տարածված նմանակություններ): Սույն (անշեշտ) դիրքում բառացանկը ո-ի դիմաց գրում է Ա: Բառացանկը այդ նույն դիրքում հին ե-ի դիմաց դնում է Ե. ահա բերված օրինակները. *ergout* = երկու (ե-ն սխալա-

գրություն է. պետք է լիներ Ե), *arechac* = արեգակն, *khurecxapte* = չորեքշաբթի, *uluec* = լույս, այն դեպքում, երբ հայերենի ե և ո ձայնավորները շեշտակիր դիրքում հանդես են գալիս երկբարբառային արտասանությամբ, ինչպես. *eriec* = երեք, *eriesc* = երեսք, *khuer* = չորձ (այստեղ նույնպես է-ն սխալագրություն է, համար. *khurecxapte* = չորեքշաբթի), *cuelc* = Կողմ: Ինչպես կարելի է նկատել՝ հայերենի ո-ն բառամիջի շեշտյալ դիրքում հանդես է գալիս յե երկբարբառային արտասանությամբ, սակայն բառակազմի շեշտյալ դիրքում ունի յա արտասանությունը. *huall* = ողն, *uaden* = ոտն ընդհակառակն, հին հայերենի է-ն չի երկբարբառանում, ինչպես *ter* = տըր, *eresc* = երէց: Սրանք, անշուշտ, ե և ո ձայնավորների երկբարբառացման ամենահին վկայություններն են:

Շեշտյալ ե-ի և ո-ի երկբարբառացման աշխարհագրական ժամանակակից բաշխվածությունն պատկերը տալու նպատակով Վայտենբերգը դիմում է ակադ. Գ. Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատությանը: Ըստ այդ աշխատության տվյալների շեշտյալ ե-ի երկբարբառացում արձանագրվում է բարբառների 28 տոկոսում, ո-ինը՝ 31 տոկոսում: Ըստ որում, հնչյունափոխական այդ երեք վույթը առկա է աշխարհագրական որոշակի հարակից (սերտ) տարածքներում և մի քանի մեկուսացած վայրերում: Հարակից տարածքը կենտրոնացած է համարվում Ուրմիա լճի արևմտյան մասում և Վանա լճի շրջակայքում: Այն ընդգրկում է Խոյ-Ուրմիայի բարբառի հարավային մասը, Վանի բարբառի ողջ տարածքը, Մուշի բարբառի հարավային և Սասունի բարբառի կենտրոնական մասը: Մեկուսացած տարածքը, որը նաև ցրված է, կազմում է կիսաշրջան՝ Սեբաստիա և Կարին-Երևան տարածքի շուրջը և ներառում է Ջեյթունի, Սեբաստիայի շրջակա վայրերը, Խոտրջուրը և Լենինական-Լոռի գիծը:

Այս բոլորից արվող եզրակացությունն այն է, որ երկբարբառացումը սկիզբ է առել այս շրջանի կենտրոնից և ապա տարածվելով դեպի արևելք՝ մեկուսացվել է այն բարբառների ազդեցությամբ, որոնցում երկբարբառացում չի կատարվել: Այդ հավանական կենտրոնը ենթադրվում է Ուրմիա-Վան-Մուշ շրջանում: Եվ քանի որ Կարին-Երևան բարբառախմբին հատուկ չէ երկբարբառացումը, բառացանկի բարբառը օտարվում է այդ տարածքից:

Բառացանկի լեզվի բարբառային պատկանելության հարցի լուծման համար Լարեոր է համարվում նաև նրա բաղաձայնաձևն համա-

արգի առանձնահատկությունների քննություններ, որին և անդրադառնում է հոգվածագիրը:

Բառացանկում դասական հայերենի ձայնեղ պայմականները միայն ոնգայիններից հետո է, որ պահպանում են իրենց ձայնեղությունը (an-dam—անդամ), մյուս բոլոր դիրքերում հանդես են գալիս որպես խուլեր. այսպես՝ բառակազմի դիրքում. chion=զիւն, peran=բերան. բառամիջի միջնայնալորային դիրքում. sabpat=շաբաթ (բ-ի դիմաց եր գրությունը կարող է ենթադրել տալ, թե ձայնեղ պայթյունի հրաշան ու պայթման պահերում ձայնեղության ու խուլության տարբերություն է նկատվել), are-chac=արեգակն. բառամիջի այլ դիրքերում. — xapic=շաբի, urpa=ուրբաթ. բառավերջի դիրքում. hinc=հինգ. (թեև դ-ն ոնգայինից հետո է), sapt (դրափոխված)=սուրբ:

Խուլ պայթականները բառացանկում ունեն երկակի արտահայտություն՝ ձայնեղ և խուլ: Ձայնեղ արտահայտություն ունեն ն-ի շրջապատում, ձայնավորների միջև և բ-ից հետո: Խուլները մնում են անփոփոխ բառակազմի դիրքում, ինչպես. taz=տասն. paner=պանիր, kenic=կնիկ, kucij պայթականները ձայնեղանում են ն-ի մոտ, ինչպես. lucenga=լուսրկայ, chugen=ձուկն, uaden=սուն, նաև բ-ից հետո և ձայնավորների միջև ընկած դիրքում՝ ergout=երկուք, erginc=երկինք, ardevanunc=արեւանուկ. միջնայնավորային դիրքում՝ kcedinc=դեմոկր, aganch=ականջ, tigung=քիկուկ, բայց ս-ից հետո մնում է խուլ, ինչպես՝ astil=աստղ:

Ինչ վերաբերում է ձայնեղ և խուլ պայթաշփականներին, ընայած զրանց արտահայտման համար լատիներենի հնարավորությունները խիստ սուղ են, բայց, բառացանկում առկա մի շարք տվյալներից ելնելով, Վայտենբերգը ենթադրում է, որ նրանք հետևում էին պայթականների օրինակին: Այսպես. z-ն anzen=անձն բառում մատնանշում է ձայնեղ հնչյուն՝ ն ոնգայինից հետո: Բառացանկում ch-ի կամ sc-ի միջոցով արտահայտվում է խուլ պայթաշփականը. chugen=ձուկն, chu=ձու, scuc=ձուր, chure=ջուր, aganch=ականջ: Ինչպես կարելի է տեսնել՝ բառացանկում չեն տարբերակված ձ և ջ պայթաշփականները, նրանք հավասարապես արտահայտված են նույն տառականակցությամբ:

Հայերենի ծ-ն բառակազմում մնում է անփոփոխ և ձայնեղանում է բառավերջում, ինչպես՝ cize=ծիժ՝ բառավերջի ե-ով, որի առկայությունը Վայտենբերգը համարում է անբացատրելի: Սակայն բառացանկում միայն այս բառը չէ, որ ունի հավելական e: Նման ճանաչատրելի

հավելում լուսանյարում տեսանելի է նաև vise=վիզ, meche=մէկ, chure=ջուր, mise=միս լատերի լատինատառ գրություններում: Պետք է կարծել, որ գրության այդ ձևերը առաջացել են այն բանի հետևանքով, որ գրանցողը (որը հայերեն չգիտեր) լավ չընկալելով բառավերջի հնչյունը, տեղեկատու անձին խնդրել է կրկնել այն: Այս դեպքում, ինչպես գիտենք, բաղաձայնի առանձին արտասանության ժամանակ վերջում լսվում է նաև ը ձայնավոր, որը և գրանցվել է որպես e (ինչպես այդ արված է նաև գաղտնավանկի բ-ի դեպքում):

Բառացանկում հայերենի պարզ խուլերն ու շնչեղ խուլները գրությամբ նույնացված են, և դա ինքնին հասկանալի է, եթե նկատի ունենանք, որ լատիներենը չի տարբերում խուլերն ու շնչեղ խուլերը: Հայերենի ք-ն արտահայտված է ի-ի, ք-ն՝ c-ի (ի-ից առաջ ch-ի) կամ k-ի միջոցով, ինչպես՝ chit=քիթ, karraschun=քառասուն. միայն մի դեպքում ք-ի դիմաց դրված է hc (prunhc=բոսիկ), որից Վայտենբերգը ենթադրում է, թե ի-ի միջոցով արտահայտված է շնչեղություն: Սակայն նման գրությունը կարող է լինել նաև ch-ի դիմաց (c-ի և h-ի դրափոխությամբ): Շնչեղ խուլներից շ-ն արտահայտված է ch-ով, որով այն նույնանում է հայերենի ջ-ից և ձ-ից խլացած հնչյունների գրության հետ, այսպես. kcerchac=խոշակ, cuech=կոշ: Հայերենի փ-ն ներկայացված է ք-ի միջոցով բառակազմում, ինչպես՝ puelc=փող, բայց բառավերջում որպես b՝ hab=ափ (միակ օրինակ): Սակայն անկախ այս բոլորից Վայտենբերգը բառացանկի բաղաձայնական համակարգում ընդունում է շնչեղ խուլների առկայությունը, նկատի ունենալով, որ հայերենի ժամանակակից բոլոր բարբառները հին հայերենի փ, ք, ք հնչյունները պահել են անփոփոխ:

Բառացանկում արտահայտված բաղաձայնական համակարգը Վայտենբերգը համեմատում է ժամանակակից հայերենի բարբառների բաղաձայնական համակարգերի հետ, նպատակ ունենալով որոշելու բառացանկի հիմքում ընկած բարբառի տարածքային պատկանելությունը: Նա բերում է հետևյալ համեմատական աղյուսակը (տե՛ս հաջորդ էջում):

Համեմատությունը ցույց է տալիս, որ բառացանկի բաղաձայնական համակարգը ճշգրտորեն չի համապատասխանում բարբառներից և ոչ մեկի բաղաձայնական համակարգին: Բառակազմի դիրքում այն նույնանում է Վանի, միջնայնավորային դիրքում՝ Սասունի բաղաձայնական համակարգին: Այլ կերպ ասած՝ չի մի բարբառ, որը երկու դիրքերում էլ ունենար

Դասական հայերեն	Բառակցքի դիրք			Միջնայնավորային դիրք		
	t	d	t'	t	d	t'
1. Սվաղ	d	d'	t'	d	d'	t'
2. Երեան	t	d'	t'	d	t'	t'
3. Տրապիզոն	d	d	t'	d	t'	t'
4. Սասուն	d	t	t'	d	t	t'
5. Մալաթիա	d	t'	t'	d	t'	t'
6. Ազուլիս	t	d	t'	t	d	t'
7. Վան	t	t	t'	t	t	t'
8. Ղարաբաղ-Լոռի				t	t'	t'

Բառացանկը

t	t	t'	d	t	t'
---	---	----	---	---	----

բառացանկի բաղաձայնական համակարգը: Վայ-տեներերը այս բանը զարմանալի չի համարում, բանն որ բառացանկի լեզվի և այսօրվա բարբառներ¹ միջև ընկած է շուրջ 1000 տարվա ժամանակամիջոց, որի ընթացքում անխուսափելի էր փոփոխությունը: Այնուամենայնիվ նա աշխատում է բառացանկի լեզվական վիճակը դրենել պատմական զարգացման մի որոշակի փուլի մեջ՝ հենվելով Ֆ. Կորտլանդի՝ հայերենի բարբառներում բաղաձայնական համակարգերի և զարգացման հարաբերական ժամանակագրության տեսության վրա²:

Հայերենի ժամանակակից բարբառների բաղաձայնական համակարգերի զարգացման համար հիմնական ելակետ է ընդունվում Ազուլիսի բարբառը, որի բաղաձայնական համակարգը համարվում է անփոփոխ հին հայերենի համեմատությամբ: Ըստ հեղինակի՝ բառացանկի լեզուն չի կարող պատկանել այս բարբառին, քանի որ այն դասական շրջանի ձայնեղ պայթականները փոխել է խուլերի (Ազուլիսը պահպանել է): Սա համապատասխանում է երկու այլ օբիեկտիվությունների. ո՛չ միջնավանկի ձայնավորի անկումը (բառացանկի erchun-ը դաս. հայերենի երեսուն-ի դիմաց) և ո՛չ էլ ո-ի և ե-ի երկբարբառացումը հատուկ չեն Ազուլիսի բարբառին:

Վայտեներերը գտնում է, որ, առհասարակ, հայերենի բոլոր բարբառների բաղաձայնական համակարգերը առաջացել են այս կենտրոնական արեալից՝ հնչյունափոխական երկու հաջորդական ալիքներով³. առաջինը արտահայտվում է ձայնեղ պայթականների շնչեղացմամբ

(q > d'), որն ընդգրկում է երեան-Կարին-Մուշ տարածքը, երկրորդը բնութագրվում է նույն ձայնեղների խլացմամբ (q > t), որը հատուկ է Ղարաբաղ-Խոյ-Ուրմիա-Վան տարածքի բարբառներին: Մյուս բարբառները, նրա կարծիքով, առաջացել են այս եր'ուսից՝ ալիքի ուշ շրջանում: Քննարկվող բառացանկը չի պատկանում նաև բարբառների այն խմբին, որ առաջացել է առաջին ալիքով (երեան-Կարին-Մուշ), որովհետև բառացանկում ձայնեղները ոչ թե շնչեղացել են, այլ՝ խլացել: Միաժամանակ ե-ի սըղումը (անկումը) հատուկ չէ երեանի բարբառին, ինչպես նաև ե-ի և ո-ի երկբարբառացումը չի շոշափում երեան-Կարին տարածքը, այլ հատուկ է միայն Մուշի բարբառի հարավային մասին: Սրանից եզրակացվում է, որ բառացանկի լեզուն հարում է բարբառների այն խմբին, որը առաջացել է երկրորդ ալիքով, այսինքն՝ դասական հայերենի ք, գ, դ ձայնեղները խլացրել է: Այս տարածքը բավական մեծ է, բայց այն կարելի է մի փոքր սահմանափակել: Իրոք, բառացանկը չի պատկանում Ղարաբաղի տարածքին, քանի որ ինչպես միջնավանկի ե-ի անկումը, այնպես էլ ե-ի և ո-ի երկբարբառացումը չեն շոշափում այս տարածքը: Մնում է Խոյ-Ուրմիա-Վան տարածքը: Բայց բառացանկը չի հարում նաև այս խմբի բարբառներին, քանի որ ունի դասական հայերենի խուլերի ձայնեղացում (u > d)՝ ձայնեղ միջավայրում:

Կորտլանդի հարաբերական ժամանակագրությունը համապատասխան՝ երրորդ փոփոխությունն իր մեջ է առնում խուլ պայթականների ձայնեղացումը (դաս. հայ. տ > d): Այդ երրորդ փոփոխությունը ինչքան որ հեռու է Խոյ-Ուրմիա-Վան տարածքից, այնքան էլ մոտ է 4-րդ խմբի բարբառներին (Սասուն-Ջեյթուն-Սիրիակամ Կիլիկիա. նաև մի քանի ցրիվ տարածքների, ինչպես, օրինակ՝ Համշենի բարբառի ճա-

² Frederik Kortlandt. Notes on Armenian historical phonology II (the second consonant shift).—Studia Caucasica 4, (1978), 9—16.

³ Մենք միանգամայն այլ կարծիքի ենք հայերենի բարբառների բաղաձայնական համակարգերի առաջացման ընթացքի մասին: Տե՛ս

Հ. Մուրադյան. Հայոց լեզվի պատմական փերականություն. հ. 1, 1982, էջ 284—297:

նիկի խոսվածքը Սև ծովի եզերքին)։ Սակայն բառացանկում դասական հայերենի խուլ պայ-
քականները միայն մասամբ են ձայնեղանում,
այն էլ՝ ձայնեղ միջավայրում։ Այստեղից ար-
վում է այն եզրակացությունը, որ բառացանկի
հիմքում ընկած բարբառը ներկայացնում է մի-
ջանկյալ մի օղակ, այն է՝ 2-րդ փուլից (դասա-
կան հայերենի խուլները դեռևս անփոփոխ են)
անցում դեպի 3-րդ փուլը (դասական հայերե-
նի խուլները ձայնեղացել են)։ Այս բարբառի ա-
նունքը փնտրվում է վանա լճից արևմուտք կամ
դեպի հարավ ինչ-որ տեղ։

Հնարավոր է, արդյոք, վերը նշված փաստերի
հիման վրա ճշգրիտ որոշել X դարից հասած բա-
ռացանկի լեզվի (բարբառի) աշխարհագրական
տեղագրությունը, — հարցնում է վայտենբերգը։
Նրա եզրակացությունը հետևյալն է։ Բառա-
ցանկի բարբառը չի պատկանում 4-րդ բարբա-
ռախմբի ամենահարավային՝ սիրիական մասին,
բայց որ և-ի և ո-ի երկբարբառացումը չի տա-
րածվել մինչև այդ վայրերը։ Բայց նրա աշ-
խարհագրական կապը բարբառային 4-րդ խմբ-
ի հարավային խոսվածքների հետ (Սասուն-
Ջեյթուն-Սիրիա) այնպիսին է, որ ականարկում է
վաղ շրջանի հարակից մի տարածք, որը հետա-
դալում էրկիրեղվել ու ներխուժել է ավելի ուշ
ձևավորված 5-րդ բարբառային խմբակցության
սահմանները (Մալաթիա—Տիգրանակերտ—Ուր-
ֆու), ուր երևան չի գալիս երկբարբառացումը։
Սրանից ենթադրվում է, որ հայ տեղեկատու
անձը կարող էր եկած լինել Ջեյթուն-Մալաթիա-
Սասուն-Վանա լիճ գծին մոտիկ որևէ վայրից։
Վայտենբերգը իր այս եզրակացությունը հա-
մարում է նախնական և լեզվական այս սկզբը-
նադրյալը արժանի է համարում ավելի մանրա-
մասն քննության։

Խնչ կարելի է ասել հիշյալ բառացանկի, նրա
լեզվի և վերջինիս քննության արված եզրակա-
ցությունների վերաբերյալ։

1. Նախ բառացանկի գրառման ժամանակի
մասին, որով այն իրապես կարող է դառնալ կա-
րևոր սկզբնաղբյուր։ Վերն արդեն ասվել է, որ
բառացանկի առաջին հրապարակիչ Օմոնը ձե-
ռագիրը հատկացրել է IX դարի վերջին կամ X
դարի սկզբներին։ Վայտենբերգը հնարավոր է
համարում ավելի վաղ գրություն՝ նկատի ու-
նենալով ձեռագրական մի շարք առանձնահատ-
կություններ։ Այդ ենթադրությունը կարելի է
հավանական համարել, եթե նկատի ունենանք
մի կարևոր հանգամանք, որ վրիպել է ուշադ-
րությունից։ Դա բառացանկում հայերեն դ-ի
տառադարձումն է լատիներեն l-ով. այսպես՝
աղ=ahl, կողք=cuelc, ողև=hualn, ասող=astil,
փողք=puelc։ Կասկած չի կարող լինել,
որ գրանցողը այս բառերի մեջ հայերենի դ-ն

ընկալել է որպես լատիներեն l-ին համարժեք
հնչյուն և ըստ այդմ կատարել համապատաս-
խան գրանցում։ Հակառակ դեպքում, այսինքն,
եթե մեր դ-ս տեղեկատու անձի բերանում հնչ-
վեր այսօրվա որսկով, այն է՝ որպես ետնայեղ-
վային ձայնեղ շփական չ, այն գրությամբ կար-
տահայտվեր ոչ թե l-ի, այլ ետնայեղվային
որևէ բաղաձայնի միջոցով, մի բան, որ ավելի
ճիշտ և հարմար կլիներ դ-ի ետնայեղվային ար-
տասանությունը նշելու, քան l-ն է, որն իր ար-
տաբերության տեղով առաջնայեղվային է։ Այս
նշանակում է, որ բառացանկի համար որպես
տեղեկատու անձ ծառայած հայի լեզվում հին
հայերենի դ-ն դեռևս չէր վերահնչյութավորվել
ու փոխարկվել ետնայեղվային ձայնեղ շփական
հնչյունի։ Հայոց լեզվի պատմական քերական-
ությունից հայտնի է, որ դ-ի վերահնչյութավոր-
ումը ետնայեղվային ձայնեղ շփականի կա-
տարվել է IX—X դդ. ընթացքում, իսկ X դարի
վերջում արդեն ավարտված իրողություն էր՝
եթե այդպես է, ապա բառացանկի լեզուն, որը
հայերենի դ-ի դիմաց հետեղականորեն հան-
դես է բերում l, չի կարող լինել IX—X դդ.
ծնունդ, այն առնվազն մեկ դարով ավելի հին
է, քան կարծվում է։

2. Ձեռագրի հնության հաստատմամբ մեծա-
պես բարձրանում է նրա աղբյուրագիտական
արժեքը։ Բառացանկը իր պարունակած լեզվա-
կան փաստերով արժեքավոր է որպես հայերենի
պատմական քերականության, մասնավորապես
պատմա՝յան հնչունաբանության կարևորագույն
և հնագույն մի աղբյուր։ Նրանում արձանագրե-
ված մի շարք հնչյունափոխական երևույթներ
հաստատում կամ նոր լույս են սփռում արդեն
քննված ու նկարագրված մի շարք օրինաչա-
փությունների վրա, ճշգրտում դրանց առաջաց-
ման մոտավոր ժամանակը։ Նշենք դրանցից մի
քանիսը։

ա) Հայերենի գաղտնավանկային ր-ն, որ ավան-
դական ուղղագրությամբ չի արտահայտվում,
բառացանկում հանդես եկող բառերում հիմնա-
կանում գրանցված է e-ով։ Ըստ որում, օրի-
նակներ կան ինչպես բառասկզբի ու բառամի-
ջի, այնպես էլ բառավերջի դիրքերի համար.
այսպես. խոչակ=kcerchac, կնիկ=kenic, լու-
սրնկայ=lucenga, ոռն=uaden, ծուկն=chu-
gen, առն=anzen։ Երկու բառում էլ, այն է՝
ասող=astil և մառն=madun, գաղտնավան-
կը մի դեպքում արտահայտված է i-ով, մյուս
դեպքում՝ u-ով, բոլոր դեպքերում էլ՝ ձայնա-
վորներով։ Միայն ողն=hualn բառում է, որ

⁴ Հ. Աճառյան. Երբ է դարձավ Ղ.—
ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1948, № 5։
Հ. Մուրադյան. Նշվ. աշխ., էջ 206—217։

Լո-ի միջև ձայնավոր չի նշված: Կասկած չի կարող լինել, որ գրանցողը տեղեկատու անձի արտասանության մեջ գաղտնավանկերում լսել է ձայնավոր հնչյուն, որը և նա արտահայտել է գրով: Այս փաստով անառարկելիորեն հաստատվում է հետո գաղտնավանկի ր-ի առկայությունը նշված դիրքերում:

բ) Բառացանկը օրինակներ է տալիս բաղաձայն + ն հանգող բառերի հնչյունական վիճակի մասին: Եթե դատելու լինենք արձանագրված, օրինակներով, աշն է՝ ալիեգակն=arechac ինն=ն, տալն=աշ, ողն=ալալ, ումն=աա-den, ձուկն=chugen, աճն=anzen, ալմն=madun. պետք է ասել, որ և-ի անկման հրեայթը դեռևս համատարած բնույթ չէր կրում և արտահայտվում էր հաղիվ մի քանի բառում (տվյալ դեպքում՝ երեք բառում): Այնպիսի սոսկորական բառեր, ինչպիսիք են՝ ումն (uaden), ձուկն (chugen), մալն (madun), դեռևս պահում են բառավերջի և-ն: Այս երևույթը ևս խոսում է ձեռագրի հնություն մասին:

գ) Ուշագրավ է նաև ո և ե ձայնավորների երկրաբառացման երևյալի արտահայտությունը: Բառացանկում գրանցված օրինակներում աղ օրինակափոխությունը առկա է շեշտի տակ: Այստեղ կարևոր է այն, որ բառամիջի շեշտյալ ո-ի դիմաց հանդես եկող երկրաբառային հրեայթումը առկա է նաև բառասկզբի շեշտյալ դիրքում, միայն այն տարբերությամբ, որ առաջինում ո-ի դիմաց գրանցված է ա, բառասկզբում՝ ա (ողն=ալալ, ումն=uaden) և որ վերջին դեպքում դեռևս բացակայում է երկրաբառացումից հետագայում զարգացած վ բաղաձայնը, ինչպես այն արձանագրվում է այսօր վո, վո, վու, վրե, վե և այլ արտահայտություններով: Դա հենց հայերենի զարգացման մեջ այն փուլն է, երբ ո-ի երկրաբառացումը շեշտի տակ տարբեր դիրքերում դեռևս միանշանակ է: Այն ևս ձեռագրի հնության նշան է (VII—VIII դ. սահմաններում):

3. Հին ո և ե ձայնավորների երկրաբառացման տարածքները որոշելիս վայտենբերգը բացառում է բոլոր այն վայրերը, որոնք այսօր աղ ձայնավորների դիմաց երկրաբառներ չունեն (Նրեան-Կարին-Ղարաբաղ, Ագուլիս և այլն): Հարցի նման լուծումը շատ պարզունակ է: Եթե դեռևս մի կողմ թողնենք այն, որ Կարնո բարբառի մի շարք խոսվածքներում առկա է ո-ի և ե-ի երկրաբառացում, աչքաթող չպետք է արվեր նաև այն, որ բացառվող տարածքի (կամ տարածքների) շատ վայրերում բառասկզբի դիրքի ո-ի և ե-ի դիմաց ունենք նաև երկհնչյունա-

յին վո, վու, վե, յե համապատասխանություններ, որոնք այլ բան չեն, քան նշված ձայնավորների երկրաբառացումից առաջացած երկհնչյուններ: Դեռ ավելին. Մեղրու, Ղարաբաղի տարածքի խոսվածքներում ո-ի երկրաբառային արտասանությունից զարգացած հնչյուններ ունենք ոչ միայն բառասկզբի, այլև բառամիջի դիրքում, ինչպես՝ ոչխար > վեչխար // վրեչխար, որ > վեր // վրեր, որակ > վերակ // վրեգակ // վրեգակ. բազա որ > բաբալեր // բաբալեր, խրեոգի > խրեցի և այլն: Ագուլիսի բարբառում ևս արձանագրվում են նման օրինակներ, նույնիսկ բառասկզբի դիրքում, ինչպես՝ ոչխար > լխար, ոչիլ > էչիլ, որդեկ > էոնիլ, որակ > էոակ, որոնք այլ բան չեն կարող. քան ո-ի երբեմնի երկրաբառացումից զարգացած հնչյուններ (ո > ա > ե): Այս տեսակետից ճիշտ է, արդյոք, նշված վայրերը հանել երկրաբառացումը ընդգրկած տարածքից: Զե՞ որ բարբառների այսօրվա վիճակի և բառացանկի լեզվի միջև ընկած է հաղար տարվա ժամանակամիջոց, որի ընթացքում ո-ի և ե-ի երկբարբառային արտասանությունը որոշ վայրերում կարող էր վերանալ (ինչպես նշված վայրերում է), հետքեր թողնելով միայն որոշ դիրքերում (կաս առանձին բառերում): Այս իհարկե չի նշանակում, թե բառացանկի լեզուն պետք է հատկացնել հիշյալ վայրերի խոսվածքներին:

4. Բառացանկի հիմքում ընկած բարբառաբառային պատկանելությունը որոշելիս վայտենբերգը նկատի է առնում նաև ժամանակակից բարբառների բաղաձայնական համակարգերը: Համեմատելով բարբառների պայթականների բառասկզբի ու բառամիջի դիրքերում կրած փոփոխությունները բառացանկի համապատասխան հնչյունների հետ և բերված բարբառախմբերում չգտնելով աղ երկու դիրքերի միաժամանակյա համապատասխանություն բառացանկի համակարգի հետ, վայտենբերգը բառացանկի լեզվի համար ենթադրում է բարբառային մի այնպիսի հին վիճակ, որը իրենից ներկայացրել է բառասկզբի դիրքում՝ վանի, միջձայնավորային դիրքում՝ Ասոնի բաղաձայնական համակարգերը: Այդ ենթադրյալ բարբառի տեղանքը նա որոշում է վանա լճից արևմտք կամ դեպի հարավ ինչ-որ տեղ: Պետք է ասել, որ «Հայերենի բարբառագիտական ատլասի» համար գրանցված նյութերում այսօր էլ կան խոսվածքներ, որոնց բաղաձայնական համակարգը համընկնում է վայտենբերգի կողմից բառացանկին հատկացվող բաղաձայնական համակարգին: Այդպիսի խոսվածքներ հայտնաբերվել են իսթի տարածքում, վանա լճից հարավ-արևմուտք: Մակայն այս չի նշանակում, թե բառացանկի լեզուն անվերապահորեն կարելի է

հատկացնել խոթի տարածքին, թեև մյուս հատկանիշները ևս բնորոշ են տվյալ խոսվածքին: Բանն այն է, որ Վլատներեդի կողմից բառացանկի համար վերականգնվող բաղաձայնական համակարգը առավելապես հենվում է հայ բարբառների ժամանակակից վիճակի, քան բուն սկզբնաղբյուրների տվյալների վրա: Այստեղ միանգամայն վիճելի է ձայնեղների դիմաց հանդես եկող հնչյունների մեջ անպայմանորեն պարզ խուլեր տեսնելու մոտեցումը: Անվիճելի է կարելի / համարել միայն միջձայնավորային դիրքում սլարդ խուլերի ձայնեղացումը: Բառակարգի դիրքում բուն խուլերի և ձայնեղներից առաջացած խուլերի որակի հարցը պարզ չէ: Որ ձայնեղների դիմաց խուլ հնչյուններ են, այդ նույնպես ակնհայտ ու անվիճելի է, սակայն պարզ չէ, թե այդ խուլերը շնչող, թե՞ պարզ խուլեր էին: Լատիներենը այդ երկուսը տարբերելու հնարավորություն չունի, և բառացանկում էլ որևէ որոշակի սկզբունք չի կիրառված դրանք խրախից տարբերելու համար: Ըստ երևույթին գրանցող լատին հոգեդրականը հիշյալ բառացանկը գրի է առել հանպատասխան, դիպվածորեն, հալերենի գրանցման համար լուսննալով որոշակի սկզբունքներ: Այդ բանը շատ լավ երևում է նրա գրառումներում: Այսպես, հայերենի ն-ից և շ-ից առաջացած խուլերի համար ուղղադրոժված է ch տառակապակցությունը, ինչպես՝ չուր=chure, ձուկ=chugen, ձու=chu, ականջ=aganch: Եթե ch-ի տալ պիտի հասկանալ սլարդ խուլ ծ և ց հնչյունները, ապա կոչ=cuech, խուլակ=kcerchac բառերում էլ այն պետք է դիտել որպես ch=չ համապատասխանություն, այսինքն՝ շնչեղ խուլ: Գեռ ավելին. նույն ch դրով արտահայտված է հայերենի գ-ից առաջացած խուլ հնչյունը. այսպես՝ արեգակ=arechac, գինի=chini. Կամ երբեմն նաև s-ի դուզակցմամբ հայերենի ս հնչյունը, ինչպես այդ նշված է Թվականներում. երեսուն=erschun, քառասուն=karraschun, յիսուն=ischun, վաքսուն=vatschun, եօթանասուն=hioctanatschun, ութուն=utanatschun: Այս բոլոր օրինակներում ch-ի հնչյունական արժեքը կարելի է կոստել միայն հայերենի ժամանակակից բարբառների հնչյունափոխական օրինաչափություններից ելնելով: Եթե arechac տառադարձության մեջ ch-ն հայերենի կ-ն կամ ք-ն է, ապա chure-ի մեջ ց-ն կամ շ-ն է, իսկ chini=գինի բառի մեջ, այն ք-ն է, կ-ն, թե՞ շ-ն: Որ տվյալ դեպքում ch-ի տակ կարելի է ենթադրել նաև պալթաշփական շ, մասնավորապես որ կա նաև փիթ=chit, համապատասխան հայ բարբառներ-

րից հայտնի այն օրինաչափության, ըստ որի գ, կ, ք բաղաձայնները առաջնային շարքի ձայնավորներից առաջ քմայնանալով փոխարկվում են պալթաշփականների: Նույնպիսի անհետեվողականություն կա նաև այլ բաղաձայնների տառադարձման մեջ. այսպես՝ ց տառով հիմնականում արտահայտված է հայերենի բառակերպի ֆ-ն՝ առամունֆ=atmunc, արտեանունֆ=ardevanunc, քիկունք=tigunc և այլն, բայց և նույն տառով արտահայտված է բառակերպի կ-ն՝ կողք=cuelc, կոչ=cuech: Որ հայերենի պանիր-ը տառադարձված է paner և բերան-ը peran, դեռևս չի նշանակում, թե ձայնեղները դարձել էին պարզ խուլեր, քանի որ բառակերպի ք-ով կարող էր արտահայտվել նաև համապատասխան շնչեղ խուլ հնչյունը, ինչպես՝ փողֆ=puefc: Եվ եթե տվյալ դեպքում paner տառադարձման մեջ կարելի է տեսնել հին խուլերի անփոփոխ վիճակը բառակերպում, բանի որ դրանք հայերենի բարբառներում չեն փոխվել շնչեղ խուլերի, ապա այդ բանը չի կարելի ասել հին ձայնեղների դիմաց հանդես եկող հնչյունների մասին: Պարզ խուլերի և շնչեղ խուլերի գրության շփոթ կարելի է տեսնել նաև այլ օրինակներում, ինչպես՝ տեք=ter, տալն=taz, ուրբար=urpat, քիկունք=tigunc, քիթ=chit և այլն: Եթե նկատի ունենանք այս ամենը, բառացանկի լեզվի բաղաձայնական համակարգում հին ձայնեղների դիմաց կարելի է ընդունել նաև շնչեղ խուլեր, որով այդ համակարգը արդեն կհարի ոչ թե Սասունի, այլ մի այլ բարբառախմբի համակարգի:

Սակայն անկախ այս բոլորից, լատին-հայերեն բառացանկի լեզվի վերաբերյալ Վլատներեդի արած դիտարկումները, այդ սկզբնաղբյուրի և հայ բարբառների լեզվական նյութի շուրջ արած դատողություններն ու եզրակացություններն ինքնին հետաքրքիր և ուսանելի են, իսկ բառացանկի լեզվի բարբառային պատկանելություն մասին նրա առաջ քաշած կարծիքը՝ գիտական վարկածի կառուցման մի գեղեցիկ փորձ:

Այս արձեքավոր սկզբնաղբյուրի լեզվական նյութը դիտական շրջանառության մեջ գտնվելու նպատակով ավելորդ չենք համարում այստեղ տալ Վլատներեդի կողմից վկայակոչված բառերի ցանկը՝ դրանք ստուգելով բառացանկի լուսնականի հետ և ավելացնելով մեր կողմից վերծանված բառերը ևս: Բառացանկը ներկայացնում ենք ըստ իմաստային խմբերի: Հայերեն բառի դիմաց բերվող լատինատառ գրությունը բառացանկում այդ բառի ունեցած լատիներեն տառադարձությունն է:

Մարմնի մասեր

ատամունք—atamunc
 ուղեք—uluec
 երեսք—eriesc
 կողք—cuelc
 ողն—hualn
 ոտն—uaden
 անդամ—(h)andam
 րեքան—peran
 Վիզ—vise
 քոռնք—prunhc
 փողք—puelc
 խոչակ—kcerchac
 արտեւանունք—ardevanunc
 աղանջ—aganch
 թիկունք—tigunc
 ձուք—scuc
 ծիծ—cize
 քիթ—chit
 մորուք—muruc
 շունչ—scunch
 կոնակ—gernac
 ափ—hab
 մատն—madun
 լինդ—lind
 շրթուն—scirtun
 յօնք—hunc
 փոք—puerha?
 լեզու—lizu
 արմուկն—armunc
 մազ—mazen

Թվային արժեքներ

մեկ—meche
 երկու—ergout
 երեք—eriec
 չորք—khuert
 հինգ—hinc
 եօթ—hioc
 ութ—ut
 ինն—in
 տասն—taz
 քսան—xan
 երեսուն—erchun
 քառասուն—karraschun
 յիսուն—ischun
 վաթսուն—vatschun

Եօթ անասուն—hiocanatschun

ութսուն—utanatschun

հարիւր—haruir

հազար—hazar

Շաբաթի օրեր

չորեքշաբթի—khurecxapte

շաբաթ—sabpat

ուրբաթ—urpat

Բնության երեւոյթներ

արեգակն—arechac

աստղ—astil

լուսնկայ—lucenga

երկինք—erginc

դետինք—kcedinc

ջուր—chure

Մնունք

հայ—haz

միս—mise

դինի—chini

աղ—ahl

սլանիք—paner

ձուկն—chugen

ձու—chu

Սննդի

տէր—ter

երէց—eresc

կնիկ—kenic

անձն—anzen

Կրօնական

սուրբ—supr

կոչ—cuech

վանք—vanc

սլատարազ—patarac

Բանասիր. գիտ. դոկտուր Հ. Գ. Մուրադյան